



ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ Ի ՎԵՐԱՅ ԱՄՏԵԱՓՐԿԻՉ ՍՈՒՐԲ ՎԱՆՈՒՑՍ - Ի ՏՐԱՊԻԶՈՆ

1. — Գետապարձ Պետրոս կաթողիկոս :
վասիլ կայսր Յունաց յամի Տեառն 1022 ,
վրաստանի ապստամբութիւնը զապելէն զկնի ,
ձմերիւն առթիւ դարձաւ յայս Տրապիզոն
քաղաք , ի նոյն ժամանակս Անի քաղաքի
մեր Սմբատ-Յովհաննէս արքայն Ռազրա-
սունի կայսեր զէպ ի Հայաստան արշաւե-
լն ակնածեալ Պետրոս կաթողիկոսն ի միջ-
նորոյթիւն առ կայսրն աճապարեցոյց . որոյ
եկեալ իջեալեցաւ ի Սուրբ վանս այս , որ
բաւական կրօնաորօք փոքրագոյն ուխտա-
անդի մը կը նշանակուի . կաթողիկոսը ար-
շաւանաց մասին կայսեր սիրտը գրաւելով և
կայսեր Հռահմոյթեամբ Յունվար 6 Տեառն
մերոյ մկրտութեան խորհուրդը ըսա ծիսի
Հայոց կատարուի ի Տէյէրմէտէքէսի գետն
քաղաքին (ըստ վաղեմի Ռեքրիտիս անուն)
Հայրապետն մեր ի վանս գտեալ կղերա-
կանօք իջնելով ի գետ ուր և կայսրն իւրայ-
նովքն անդ զիմեալ մինչ Հայրապետն ոսկի
Սուրբ նշան խաչն ի գետ արկ , իսկոյն յոր-
ձանք գետոյն անշարժ մնալէն յետոյ յեզերս
հարաւի լոյս մը փայլատակեցաւ ըստ պատ-
մութեան Արիստակէս Լաստիւլերացոյն , այն
ոսկի նշան Սուրբ խաչը դարուս սկիզբը մեր
նախնիքներէն տեսանելի էր և մերս ժամա-
նակ անյայտ :

2. — Դաղթականութիւն խօճայ Ստեփա-
նու յարեւելից :

Պետրոս Գետապարձի առ կայսրն այցելու-
թենէ չորս Հարիւր տարի միջոց զկնի (1400)
խօճայ Ստեփանոս գաղթականութեամբ աստ
գիմելը իւր գերդաստանաւն Հանդերձ ակնե-
րեւ է որ նոյն ժամանակը Յունաց իշխանու-
թիւնը տկարութեամբ առկայծեալն էր . խօճայ
Ստեփան Յունացմէ անդաստաններ գնելով
իւր արդեամբք ընդարձակեց վանուցս սահ-
մաններն և վաղեմի Հին եկեղեցիներն քան-
դելով , անոնց վրայ արդի ընդարձակներն
կանգնել փափաղեցաւ և յանձնեց անդ զե-
տեղեալ միաձննութեան Հարց , և շինութեանս
արժանի և անհնջելի անունն միակտուր մար-
մարիոն վերծանեալ քարիւ յիշատակ թո-
ղուց մինչեւ ցայժմ յետնելոցս :

« Փառաց տաճար Աստուածային » յերկրի
դրախտ կենաց փրկչին — կանգնեալ յանուն
Ամենափրկչին ի Ութն Հարիւր թուականին
եօթանասուն և երեքին — ի կաթողիկոսու-
թեան Հայոց մեծաց Տէր Պողոսի ուղղա-
փառի — ի ժամանակս բարեպաշտի կիր Ա-
լեքս թագաւորի — խօճա Ստեփաննոսն պա-
տուելի շինեաց տաճարս Հրաշալի — Յիւր
յիշատակ անհնջելի և ծնողաց իւր կրկնակի
— և կենակցին իւրոյ Մելիքայ խալժունին և

զաւակաց իւրոց մեծի և փոքու: — Արդ ես խօճա Ստեփաննոս ստացայ ի հալալ արդեանց իմոյ զտեղի վանուցս իւր անդաւտանս, և շինեցի զլուսադարձ տաճարս յիշատակ հոգւոյ իմոյ և ի վայելումն մանկանց ի խոփելի: — Եւ ետու միաբանից Սուրբ ուխտին և խօճայ Ստեփաննոս և իմ որդիքս, զի հասարակ ամենայն ֆրիստոնէից է վանքս, և կրօնաւորաց որ բնակեալ են ի սա և Աստուծոյ տուն, և ոչ ոք ունի իշխանութիւն ոչ յիմոց և ոչ յօտարաց իրեւ զմարմնաւոր հայրենիք իշխել ի վերայ վանուցս, այլ ազատ է ազատի և Աստուծոյ տուն, այլ միայն զինամոն պահելով և զամենայն կարիք Սուրբ վանացս կատարելով: Սուրբ նշանս Աստուծո ընկալ յիշատակ է խօճա Ստեփաննոսի և որդւոյ իւրոյ Պարոն Մկրտչին և մատուռ նորին Սուրբ կարապետին և շրջապատ իւր պարսպով յիշատակ ինձ և ծնողաց իմոց և ամենայն ազգականաց:»

3. — Սուրբ վանուցս Ալագ եկեղեցիէն զատ միւս երեք մատուռներն են.

ա. — Աստուածածին անուն քառակուսի մատուռն զանգակատան ներքեւ:

բ. — Սուրբ Էրորդուլութիւն, փոքր մատուռն զանգակատան մէջ տեղը:

գ. — Սուրբ Յովհաննէս փոքր մատուռն արեւելեան զին, որ Ալագ եկեղեցիէն երկու տարի յառաջ կանգնուած է:

4. — Յիշատակութիւնք զանգակատան և այլ վայրաց:

«Խօճայ Պաղտատարն նորոգեց զզանգակատուն: — Քրիստոս ողորմի Աստուածատուր արեղային որ զզանգակատունն ներքեւի խուցն նորոգեց:»

«Աստուած ողորմի խօճա Ղարային հոգւոյն որ շինեց զվանից ժամանակն յիշատակ իւր հոգւոյն: Քրիստոս աւրհնէ զխօճա Ղարային զուստն Սուրբ խաթունն որ եկեղեցւոյն պարիսպն շինելն և սպիտակ երէտ իւր հաւր հոգւոյն: — Քրիստոս աւրհնէ զՊարոն խօճիկն որ զժամատան զլերեւն կրկին ծածկեց կղիմտորով:»

«Քրիստոս ողորմի Կարապետ չէլէպուն որ զրկեց և ստըկի խալի մը իւր հաւր Եղպէլ չէլէպուն հոգւոյն: Այլ և ողորմի մօրն հոգւ-

ւոյն որ զրկեց կանաչ քեմիայ շուրջառ մի և զարնիշան մոմկալ: — Քրիստոս Աստուած աւրհնէ զխօճայ Յաղապչին զզուստն Դահլաւատ խաթունն որ երէտ ա ըսկիհ և զմեծ կրամասուն յիշատակ իւր հոգւոյն ի Սուրբ վանքս: Քրիստոս ողորմի մղտոնի Յեւատի հոգւոյն որ զամենայն ինչս իւր երէտ ի Սուրբ վանքս. և զինչ խնդրեաց ի Սուրբ Փրկչն զտաւ, և երէտ զմեծ արծաթի խաչն յիշատակ Քրիստոս ողորմի Բարսեղ Պատրիարքի հաւր հոգւոյն որ երէտ ա խալի ի Սուրբ Փրկչի տունն, և է խալի ի մալէն իշոյց: — Քրիստոս աւրհնէ զխօճայ Պապաշահնն որ երէտ ծառայ մի իւր որդւոյն արեւուն Աստուածատուրին ի Սուրբ Փրկչի դուռն:»

— Թուով Աղէ վախճանեացաւ Աւետիս Պարոն Տէրն և յաջորդեաց զտեղին Աստուածատուր սրբազան:»

— «Քրիստոս ողորմի Անդրէասին և իւր ծնողաց Դաթիկից Տաւրին հոգւոյն և իւր մօրն Սաակուլին: Աստուած ողորմի իրենց հոգւոյն զլուսադրերն մէկ քօշք շինեց: Քրիստոս ողորմի ոսկերիչ կարապետին որ շինեց զվանուցս աղբիւրն, Քրիստոս Աստուած աւրհնէ զՊարոն խօճաքին Չամբին զթոռն որ կրկին շինեց զաղբիւրն յիշատակ իւր աւրեւուն:»

— «Այս Մամ (Սուրբ Մամաս) եկեղեցի վանուցս հիւսիսակողմն զեղեցիկ տեսարանով ըլլալ մը վրայ կանգնուած էր բայց մինչեւ և ցայտ օր ամայի: Ըստ յիշատակարանի Սուրբ վանուցս հօլանաւորութեան ներքին գտնուած էր, ինչպէս «Քրիստոս Աստուած աւրհնէ զխօճայ Միրիմանն որ Այս Մամին համար ա ֆլորիմ երէտ ի Սուրբ Փրկչս..... զխօճայ Դամիրս որ զյարուսթեան պարտէզն շրջապատ կրկին շինեց: Աստուած աւրհնէ զիւր որդին որ երէտ և սպիտակ Այս Մամին համար յիշատակ ի վանքս:»

5. — Բարձունն իշխանութեան Յունաց ի քաղաքս:

Յետ տիբեղլ Սուլթան Մեհմէտ հօր ֆէթիհի Կ. Պոլսոյ, եօթն տարի յետոյ (1662) տիրեց նաեւ Տրապիզոն քաղաքս. որն թուականս 59 տարի յառաջ Յունաց Ալէքս

Հոմեննոս արքային իշխանութեան օրով խօսեալ Ստեփաննոս կառուցած է Սուրբ Վանս, թէպէտ ոչ Յունաց իշխանութեան և ոչ ալ ֆէթիճի իշխանութեան կողմանէ Հրովարտակ ունենալ վանքս չյիշատակուիր. բայց Այէ Ֆիլիպօ քաղցրահամ աղբիւրը որ Յունաց Եպիսկոպոսի մը օրիորդի յիշատակն ուստոր ցեղին պաշտպանութեան ներքեւ էր, ֆէթիճի սոյն աղբիւրի պաշտպանութիւնը մեր ազգայնոց յանձնեց Հրովարտակաւ, վասն զի ազգայնոց բնակարաններն յիշեալ աղբիւր շրջակայն էին և Բստ յիշատակարանի «Քրիստոս ողորմի Վամայ խաթունին հոգւոյն որ երէտ Այէ Ֆիլիպին վերեւն կտոր մը տեղ յիշատակ Սուրբ Վանքս» — Սոյն յիշատակութեան առթիւն է որ վանուցս սահմանը աւանդութիւնք մինչեւ Հանի Օսման անուանեալ Հորը կը տանին, և երբեմն ալ յիշեալ աղբիւր Հիւսիսակողմի զառի վայր պարտէզներն կը կարծուէր — հուսկ ամենաին վանուցս առաջին Հրովարտակը վանուցս սահմանները ըստ օրինի կ'որոշէ աւանդութեանց չտալով տեղիք:

6. — Առաջին Հրովարտակ Սուրբ վանուցս և սահմանք անդաստանաց ըստ այնմ: Յետ յաջորդելոյ ֆէթիճի Սուլթան Պէյազիտ Բ. որոյ որդի Կալուզ Սէլիմն որ ի մանկութենէն իւր ծնող մարբ մէկ տեղ Տրապիզոն կը բնակէր, խօսեալ Ստեփաննոսի որդւոյն ինդրանօք Կալուզ Սէլիմի միջնորդութեամբ վանուցս Հրովարտակը Սուլթան Պէյազիտէն ձեռք բերուեցաւ. թէ սոյն առաջին Հրովարտակին և թէ հաջէն ձեռք բերուած Հրովարտակներուն մէջ «Տրապիզոն վէ թէվապի էրմէնիսան Մանաստըր շէմէշտըիս» նշանակուած է, որ խօսեալ Ստեփաննոսի կը վերաբերի սոյն Շէմէշտըի մակաւնուր: — Սահմանք Անդատանաց են յԱրեւելից Սիւլիւկի կէօլ և Արազ որ է գետն, — ի Հարաւայ Այազմա և Սօփուքու — յԱրեւմտից Թէրաքամ եօլ (վաղիմի կարաւանի ճանապարհն), Չամիլիճէ (զլուի Մաշէտրիս գիւղին) և Խափսի տէրէսի: Եթէ Սալիճէն ուղղագիծ մը ձգեմք մինչեւ Խափսի տէրէսի սահմանը՝ շատ վայրեր յափշտակուած կը տեսնուին: — Եւ ի Հիւսիսայն արդի նորա-

շէն կարաւանի ճանապարհն: — Միանգամայն «Իլլի առեք պախձէ» կը յիշէ Հրովարտակը:

— Վանուցս յիշատակարանի համեմատ առաջին պարտէզն որ ի վեր անդր յիշեցաք Այէ Ֆիլիպպէ աղբիւր վայրի հարթ վայրն է հաւանականարար — բայց երկրորդ միայն աւանդութիւնք մեզ կը հաստատեն որ Ֆրանկ Հիսար (գանթիթ) Թաղի մէջ գտնուած պարտէզն է որ դարուս սկիզբներն Գալուքնեան Աստուածատու բարեպաշտ իշխանն զանկաւ վաճառեւ և արդի ազգային Հիւսպտոսարանը իւր ընդարձակ պարտիզովը 700 զահկանի գներ է Սուրբ Օգոստոսի եկեղեցւոյն հուսրըլլալուն առթիւ, որ բաւական ժամանակ ալ Առաջնորդարանի պատիւն ունէր: Սոյն Ֆրանկ Հիսար Թաղի մէջ Ֆրանկ անուամբ Եւրոպացիք բնակելուն առթիւ Ֆրանկ Հիսար աւանդուած է, բայց սոյն գաղթականք կամ աւելի Հայասեր ըլլալուն և կամ թէ առաջին ֆէթիճին Հայոց կողմը շեղելուն, անոնց նուէրքն ալ յիշատակարանը կը յիշէ «Քրիստոս Աստուած արհնէ գիրանիկն որդին զհիւսիսըլլաւն (?) որ երես բոն մի գինի յիշատակ ի Սուրբ փրկիչ»:

7. — Բստ յիշատակարանի վանուցս Աթոռակալաց յատուկ սենեակ ունենալին: «Աստուած աւհրնէ զխօսեալ Տրապիտ որ շինեաց զՄիշտեսուն խուցն իւր հոգւոյն համար» — ի վաղուց վանուցս երեսփոխանութիւնն աթոռակալութիւն կ'անուանուէր:

8. — Տէլիքի Թաղի վայր նգնաւոր աւանդանալն:

Արդարեւ կը տեսնեմք սոյն ապառաժ բլուրի ծայրն յիմափոր գերեզման մը որ թէ մեր և թէ օտար ազգի տիկնանց ըստ վաղիմի սովորութեանց ուխտատեղի մ'է անդ, բայց ոչ թէ միայն պատմութիւնք այլ և աւանդութիւնք անգամ անյիշատակ թողուցած են սոյն ուխտատեղին:

— Վանուցս Հիւսիսակողմն գտանի քաղաք մը որոյ լայնի հարթ տեղուանքը քանի մը տարի յառաջ երկրաշարժներէն փորուելով անդ յայտնուեցան քաղաքի բաւական որ մերու շարք և մերձ նոցին յիմափոր, ընդարձակ ջրհոր մը որ նորոգութեան կարօտ,

և աստի փողը ինչ զատ ի վայր յիմափոր գերեզման մը փալլուն կմախքներով, արդարեւ հաւանական կը թուի որ վանուցս կրօնաւորաց բազմութեան առթիւ խօսեալ Ստեփաննոսն անդ բնակած է իւր գերեզմանաւն, քանզի հորին մեծութիւնն և ընդարձակութիւնը հաւանական կը ցուցնէ եթէ յիշատակութիւն չկայ ալ նէ:

9. — Գրադթականութիւն ազգայնոց մերոց ի Տրապիզոն:

Վանուցս յիշատակարանի մէջ յիշուած հին անուանց, զրամոց և բաւոց նշանակութիւնը արդարացի կը ցուցնեն մեզ որ մեր նախնի ազգայինք ոչ միայն Անի քաղաքէն այլ և Պարսկաստանէն անդամ աստ գաղթականութեամբ հաւաքուած են, ինչպէս «Քրիստոս ողորմի Տրդատին մօր Փաշա խաթունին որ երեստ աս ֆարտ ոսկի ի Սուրբ Փրկիչս»:

10. — Չորեքին եկեղեցիք քաղաքին որք են յիշատակ Ստեփաննոսի և իւր սերնդոց:

ա. — Սուրբ Ռգենտոս բնդարձակ գերեզմանատունով, որոյ մէջ ժամանակ յառաջ հաշէն Աստուածածնի պատկեր մը դրուելով եկեղեցի Աստուածածնի յորջորջուելու պատիւն ունեցեր է, և Աստուածածնայ տօներն միշտ անդ կը կատարուին, որոյ գաւթին մէջ կանգնեալ խաչքարին ստորոտն քանդակեալ հինաւորոց տառերն որ հնութեան առթիւ խանգարեալ և անվերծանելի են, արդէն մեր գիւղացի ազգայնոց վաղեմի սովորութիւնը եկեղեցի գնամբ չեն խօսեր միմեանց, հասկա «Խաչ գնամբ» այսու աղագաւ հաւանական կը թուի վաղեմի ժամանակներն եկեղեցի մը կանգնուելէն յառաջ խաչ քար մը կանգնելու սովորութիւն եղած է, ինչպէս որ քաղաքին չորս եկեղեցիքն խաչ քար ունին:

բ. — Սուրբ Ստեփաննոս (Չարիսթիան) եկեղեցին բնդարձակ գերեզմանատնով ըստ յիշատակարանի «զվերջին շինող Սուրբ տաճարին զխօսեալ Շամշատին և զիւր կողակիցն և Չաւանաշէն (?) զՊարոն խաչատուր յիշեցէր ի Սուրբ յաղօթս ձեր: Թուով Հայ ՊՁ»:

Այն եկեղեցւոյն Հիսսիսային կողմէն իսկէն տէր փաշայ քաղաքական ճանապարհ բանալով գերեզմանատան մէջ մասն հիսսիսին

կողմը մնաց որ արդէն խաչ բակ կ'անուանուի և անդ կայ կառուցած աւերակ խորան մը և միանգամայն կան խորանին վրայ քարափոր խաչեր և հեծեալ մը սուրբի անունով բայց յիշատակութիւն մը չկայ:

գ. — Սուրբ Յովհաննէս եկեղեցին ի զլուս մեծի շուկային որոյ Հիսսիսային քարուկիւր որմին մէջ կանգնուած է միակտուր մեծաքար յիշատակարանն բայց տառից հնութեան առթիւ խանգարեալ անվերծանելի են:

դ. — Աստուածամայր եկեղեցին որ դարու սկիզբներն կաթողիկէ հայ ժողովրդեան կողմնակցաց շնորհիւն սեպհականուած ըլլալուն և նորոգ ի հիմանց կառուցուած թէ և ունի յիշատակութիւնք՝ բայց զանց առնուեցաւ տեղեկագրել:

11. — Ի վերոյ անդ յիշեցաք որ մեր ազգայնոց մասնաւոր բնակութիւնքն Ալէք Սիլիպէ աղբեր շրջակայն էին, բայց ըստ մեծի մասին բնակութիւնքն Այս Մամ եկեղեցւոյ շրջակայն ըլլալը միայն աւանդութիւնք կը հաւատեն. նոքա եւս տաղակացեալ ի կեղեքութեանց՝ քաղաքին արեւելեան բրուտանոց (Չէօմէքէքի) անուն թաղը իջեալ գետեղեցան — բայց անտի եւս յերեսաց կեղեքութեանց երկու դար յառաջ յալամայ գաղթեցին Տարսիս նահանգին փէֆէ քաղաքն որոց ոմանք արեւակիցք արդէն պակաս չեն ի Տրապիզոն քաղաքի:

12. — Երկայ դար — քանի մը դար ի վեր բնակալաց երեսէն Սուրբ Վանս հոգաբարձութիւն չունենալէն՝ շրջապատ որմերը հիմնայատակ կործանուած էին, և մինչեւ անգամ յաւուրս մեր քանիցս կողպատուիլ մեր հինաւորոց կենդանի ազգայնոց ակներեւ է. բայց դարուս սկիզբները Ռափայէլեան մահտեսի Բարսեղ բարեպաշտ աթոռակալի ջանքի և հասարակութեան օգնութեամբը վանուցս շրջապատը միայնակ սենեակներով նորոգուեցաւ — այն եւս բնակալաց հրամանաւ, վասն զի թէ վանուցս և թէ իւր անդաստանաց հասցիք անոնց կը ծառայէին միշտ:

13. — Վիճակ Սուրբ եկեղեցեաց ի քաղաքի — ինչպէս ի վերոյ յիշեցաք կեղեքութեանց բնութիւններէն ազգայինք միջոց առ միջոց գաղթականութեան գիմնելուն 70 ամ

(1816) յառաջ թէ տանտէր և թէ վարձաւոր
ասեմ, յաւուրս մեր 130 բնակիչ կը գրու-
նուէր, ազգայնոց նուազութեան աւթիւ Սուրբ
Սարգիսիոս և Սուրբ Յովնանէն եկեղեցի-
ներն փակեալ և ամայացեալ էին, և միայն
Սուրբ Ստեփաննոս (Չարիափառ) եկեղեցեաւ
կը միկթարուէին, և այն եւս կողպուելով
մերկացաւ իւր հարուստ անօթներէն, բայց
գարուս սկիզբներն Տէր խորայէլ վարդապե-
տի առաջնորդութեան ժամանակ եթէ յի-
շեալ երկու եկեղեցիք բացուելով նորոգուե-
ցան, բայց հանդիսաւոր տոնախմբութեանց
օրերը մէկը միայն կը բացուէր ժողովրդեան
նուազութեան պատճառաւ:

14. — Սուրբ վանուցս զօրանոց լինելն
յաւուրս մեր: — Սուրբ Մատնուս հօգո-
րինքեակալի հրամանաւ Տրապիզոնի խազնա-
տարեան Օսման փաշան զօրաց գումարտակս
կազմելով արշաւեց ընդդէմ Երզրայտոսի իշ-
խանին խորհանք փաշայ (1834) մինչեւ ի
Եարքիւլ — նոյն ժամանակի արեւելեան Սիւր-
մենցի և քաղաքին գաւառաց չարանեղ ժո-
ղովուցիք, քաղաքը պաշտպանութենէ զուրկ
տեսնելով 15000 ի չափ գումարուելով քա-
ղաքս կապառել և կողպուել յանդիմանաց .
այսպիսի անխրաւութիւնք քանիցս գործելին
մեր ժամանակի ծերերը մեզ աւանդած են:
Սոյն երկիւղալի ձայնը քաղաքս ահի գողի
և կոծի մէջ ձգեց, յոյր սակս քաղաքին ա-
մեն աղջի երեւելիք ցաւ ի սրտի դիմեցին
հաճի Սալեհեան Ալի աղայի որ Աղճապատ
նահանգին հօգո իշխանն էր ու յիշեալ հաճի
Սալեհեան քաղաքին վրայ ցաւելով, իսկոյն
4000 ի չափ զօրաց գումարտակ մ'առնե-
լով ի պահեստ դրաւ, մինչ ելուզակ Սիւր-
մենցիքը ու Օթիցիքը կատաղի արատաճե-
լով Տէյէրմէնաէրէսին անցնելով և գառ ի վեր
Պոլսէփէ լերին ազգայնք հասին. հաճի Սա-
լեհեանն յանկարծակի յարձակեցաւ և զա-
նոնք յետս ի կրունկ վանելով փոքր գունդ
մը քաղաքին մէջ պահապան դնելով ինքն
իւր մնացեալ զօրքը ի վանս դիմելով ռաստ
գորանոց որոշեց, և ժամանակը կարի ձեռու-
նային ըլլալուն վանուցս շրջապատը որչափ
պողպատու և անպտուղ ծառատունկք կային
բոլորովին զօրաց շենելոյ զոհ եղան. թէ և

քաղաքը աւարառութենէ զերծաւ, բայց վա-
նուցս ծառատունկներն ֆառսուելէն ի զամ
եկեղեցեաց որ զօրաց ննջարան եղած էին,
որմերուն վրայ նկարագրեալ պատկերք ան-
գամ փտուելով խանդարուեցան:

15. — Ալաւաութիւն Սուրբ վանուցս և
ձեռնարկութիւն շինութեան նորա:
Նոյն քան զամս քառասուն և եօթն (1839)
մեր Օսմանեան հօգո տէրութեան օրէնսդրու-
թիւնն ի կիւլհանէ իսպառ եղծեց և անհետ
ըրաւ կեդիքիւ իշխանաց զօրութիւնը. թէ
Սուրբ վանս թէ նորին անդատաններն և
թէ ազգայինք ազատ մնացին ամեն տեսակ
կեղծութիւններէն և այնուհետեւ ազգը իբր
փխնիկ նոր ի նորոյ կենդանանալով ազ-
գային վերականգման օգտակար շինութիւն-
ներու ձեռնարկու գտնուեցաւ, և մինչև ցայ-
սօր նոյնպիսի շինութեանց պարապած է ջերմ
ողուլ. թէպէտ 1854ին վանուց հարաւային
սենեակներն գիշերն աւազակները հրոյ ճա-
րակ տուին, բայց ազգը անյուսաւատ ալ
աւելի ամրապնդ շինութեամբ թէ և ձեռ-
նարկու գտնուեցաւ, բայց քաղաքի ազգային
մեծածախ շինութիւնքն արգելք եղան ալ ն՛՛
արդէն նորոգ սկսաւ վանուցս շինութիւնն
ալ յառաջ շարժել, ինչպէս որ ականատես
են բարեպաշտօն ուխտաւորք:

16. — Կորուստ Յիշատակարանի — դար
յառաջ Սուրբ վանուցս Յիշատակարանը տե-
սանելի էր, բայց մեր Սերձաւոր նահնկաց
անհոգութենէն և թուլութենէն անշարտ եղաւ
և կամ յափշտակուեցաւ որ տեղ մը չերեւար
մինչև ցայս օր, եթէ յիշատակարանն ձեռ-
քերինս՝ իբր հնութեան գանձ գտնուէր, ի
հարկէ ալ աւելի տեղեկութիւնք քաղելով
պիտի ընդարձակուէր սոյն մասնաւոր տե-
ղեկագրութիւնը: Այսչափս միայն կարողու-
ցանք թէ պատմութիւն մը և թէ աւանդու-
թիւններէ հանգանակել ըստ մեր կարողու-
թեան, ալ աւելին և կամ թէ թերութիւն-
ներին լեցունելը խնդրանք կը թողումք բա-
րեմիտ և հնախոյզ ուսումնասէր ազգայնոցս,
որ եւ՛ տեղեկեցող Յարութիւն վ. Պետ-
րոսեան 1886 Մայիս, ի Սուրբ Փրկիչ վանս:
Ընդօրինակեալ ի վանս 1890 Ապրիլ
20 ի ձեռն

ՎՈՐՈՅՑԱՍ ԼՂԻՒՄԵԱՆԻ